Շատին

Բնակչության թիվը՝ 2052

Շատին գյուղը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից ներգաղթված հայ ընտանիքներով: Գյուղն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են գյուղում գտնվող վանքերն ու մատուռները:

Գյուղի տարածքում է գտնվում երբեմնի Եղեգիս քաղաքի ավերակները,Աղվանք և Բազելիկ եկեղեցիները, Շատիվանք եկեղեցի-համալիրը: Գյուղի տարածքում է գտնվում Ավարայրի ճակատամարտից նահանջած հայրենասեր մարտիկների գերեզմանները,որոնք նահանջի ճանապարհին մարտի են բռնվել պարսիկների հետ: Այդ փաստն են վկայում Անգեղի, Սուրբ Աստվածածին և գյուղի այլ տարածքներում գտնվող մատուռները:

Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1300-1350 մ, այն ունի գեղեցիկ դիրք: Արևելյան կողմից գյուղի վրա կախված են ժայռակազմ լեռների բազմասյուն ճակատները: Գյուղի տարածքը ձգվում է Եղեգիս գետի երկայնքով,նրա երեք վտակների հատման տեղում:

Գեղեցիկ բնաշխարհ ունի: Բնակչության զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Ցանկացած պտուղ,հատապտուղ, բանջարեղեն աճում է այս տարածքում:

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 12 կմ հեռավորության վրա : Գյուղով անցնում է մարզկենտրոնն ութ գյուղերին միացնող միջմարզային ճանապարհը և դեպի Սևանի ավազան տանող բարեկարգ ճանապարհը:

Գյուղով է անցնում ,,Հերմոն-Ելփին'' ոռոգման ջրատարը, որի շնորհիվ հնարավոր է ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 200 հա տարածք:

Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ՝ շինարարական քար՝գրանիտ,տրավերտին:

Համայնքի բնակչությունը 2011թ. հունվարի 1-ի տվյալներով 2052 մարդ է,տնտեսությունների թիվը՝ 723:

Համայնքի վարչական տարածքը 3325 հա է,այդ թվում՝ տնամերձի ֆոնդը՝ 75 հա,գյուղ նշանակության հողերը՝1085 հա:

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը 20800 մ է,որից ասֆալտապատ՝4500, մնացած մասը գրունտային է:

Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց,առողջության կենտրոն,մշակույթի տուն,գրադարան:

Գյուղի բնակչությունը որպես հանգստի գոտի օգտագործում է Եղեգիս գետի հունին կից ծառապատ ազատ տարածությունները: